



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 169/26 « 13 » 09 2021 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ Ժ/Պ-Ի ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ԵՊՀ ռեկտորի ժ/պ-ի 2021 թ. օգոստոսի 23-ի «Երևանի պետական համալսարանի կողմից լրացուցիչ ծառայությունների մատուցման և փաստաթղթերի տրամադրման վարձաչափերի և ժամկետների մասին» թիվ 154/32 հրամանը լրացնել «ԺԵ» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«ԺԵ. Շրջանավարտների ուսումնառած առարկաների, դրանց նպատակների, թեմաների, հանձնարարությունների, գնահատման ձևերի, գրականության ցանկերի և նմանատիպ տեղեկատվության վերաբերյալ տրամադրվող տեղեկանքների 1 էջի արժեքը սահմանել 2000 ՀՀ դրամ, յուրաքանչյուր հաջորդող էջի արժեքը սահմանել 500 ՀՀ դրամ:

Նշված տեղեկանքները տրամադրվում են 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ էջերի քանակը մեկից ավելի լինելու դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում»:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Հ. Կ. ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ